«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 162/23 14 10 2023թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՝ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՄԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2003 թ. մարտի 27-իթիվ 347-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կանոնադրության 32-րդ - կետի պահանջներով՝

հրամայում եմ.

1. 2023 թ. նոյեմբերի 01-ից մինչև դեկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում ԵՊՀ ԻՄ-ում ուսումնադաստիարակչական աշխատանքներին անմիջապես մասնակցող բոլոր աշխատողները պարտավոր են անցնել առողջական վիճակի պարբերական բժշկական զննություն:

2. Սահմանել, որ աշխատողը պարտավոր է նշված ժամանակահատվածում իր ֆակուլտետի դեկանատից (վարչական համակազմը՝ ԵՊՀ ԻՄ-ի ԱԿԻԱ բաժնից) վերցնել իր սանիտարական գրքույկը, սահմանված կարգով այցելել Իջևանի պոլիկլինիկա (հասցե ք. Իջևան Երիտասարդական փողոց) և անցնել (անվճար հիմունքներով) առողջական վիճակի պարբերական բժշկական զննություն, որից հետո սանիտարական գրքույկը հետ վերադարձնել ԱԿԻԱ բաժին:

Անվճար բժշկական զննություն անցնելու համար անձը հաստատող փաստաթղթի ներկայացումը պարտադիր է:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ԻՄ-ի աշխատողներին:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ